

ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ

ՄԻՇՏ ՆԱԲԱՏԱՐԻՄ ՄԱՅՐ ԱԹՈՒՆ

Արտասահմանի եւ մանաւանդ Ամերիկայի հայութեան համար Ս. Էջմիածինը՝ որպէս սրբավայր, եւ Ամենայն Հայոց Հայրապետական նախամեծար Աթոռը միասնաբար կը խորհրդանշեն Քրիստոնեայ հայ ժողովուրդի ինքնութեան հիմքը: Առանց Մայր Աթոռին՝ կարելի չէ երեւակայել, թէ ինչպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական կարգը եւ հայ քրիստոնէութիւնը կրնան գոյութիւն ունենալ: Մայր Աթոռով եւ անոր առաքելաշաւիղ գահակալով է որ պայմանաւորուած է Հայոց Եկեղեցւոյ գոյութիւնը աշխարհի երեսին՝ որպէս փարախը Քրիստոսի հայ հօտին:

Ամերիկահայոց թեմը հարիւր տարի առաջ հաստատուած է մեծանուն Տ. Մկրտիչ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայոց Հայրիկին սրբատառ կոնդակով: Իր հաստատման առաջին օրէն իսկ Ամերիկահայութիւնը՝ կազմուած պանդուխտ հայորդիներէ եւ Մեծ Եղեռնի մնացորդացէն՝ միշտ հաւատարիմ գտնուած է Ս. Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Հայրապետին: Այսօր եւս՝ երբ վերացած է սգոյ քօղը հայրապետական գահի վրայէն՝ Ամերիկահայութիւնը, եւ Ամերիկայի Արեւելեան թեմը ի մասնաւորի, իր հաւատարմութիւնը կը յայտնէ Մայր Աթոռին եւ անոր արժանընտիր գահակալին: Մեր թեմի պատգամաւորները նորընտիր Վեհափառ Տ.Տ. Գարեգին Բ.ի ընտրութենէն անմիջապէս ետք՝ խմբովին ներկայացան Նորին Սրբութեան եւ յայտնեցին իրենց սէրն ու յարգանքը հանդէպ Մայր Աթոռին: Վեհափառը հայրական գորովով ողջունեց Ամերիկահայ պատգամաւորութիւնը, հաճեցաւ պատասխանել այլեւայլ հարցումներու եւ վերանորոգեց իր ծանօթութիւնը անհատ պատգամաւորներուն հետ:

Ամերիկահայոց համար նոր դէմք մը չէ Նորին Սուրբ Օծութիւնը, որ քանիցս այցելած է Միացեալ Նահանգներ, Ս. Պատարագ մատուցած է Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ եւ իր բարձր ներկայութեամբ պատուած՝ այլեւայլ ծուխեր: Անցնող տարիներուն՝ նման եւ այլ առիթներով Ամերիկահայութիւնը Տ. Գարեգին Ներսիսեան Արքեպիսկոպոսի միջոցաւ ծանօթացաւ Արարատեան Հայրապետական թեմին մէջ կատարուած կարեւոր աշխատանքներուն եւ

ողջունեց իր մէջ երիտասարդ, խանդավառ դիտապետը Մայր Հայրենիքի ամենակարելւոր թեմին: Մեր ժողովուրդը հոգեպէս հրճուեցաւ Արարատեան թեմի մէջ մէկ առ մէկ վերաբացուող, նորոգուող կամ նոր կառուցուող եկեղեցիներու մասին լուրեր ստանալով: Այդ հրճուանքին մաս կը կազմէր նաեւ թերթերու մէջ հրատարակուող նաւակատիքի կամ օծման հանդիսութեանց նկարներուն մէջ տեսնել Երեւանի երիտասարդ Առաջնորդական Փոխանորդը՝ խորան, սրբանկար կամ զանգակատուն օրհնելու պահուն:

Արտասահմանի հայութեան համար մեծ ուրախութիւն էր տեսնել, որ հոգելոյս Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի ջանքերով կանգուն պահուած Հոգեւոր ճեմարանի սաներէն շարք մը երիտասարդ հոգեւորականներ կոչուած էին Հայց. Եկեղեցւոյ վերատեսչութեան պաշտօնին եւ անոնցմէ մին արժանի նկատուած էր դառնալու Արարատեան թեմի Առաջնորդական Փոխանորդը: Այդ մէկը արդարացուց իր վրայ դրուած յոյսերը եւ իր ժիր գործունէութեամբ օրինակ հանդիսացաւ այլոց: Վկայ այս ամէնուն՝ աղքատախնամ գործունէութիւնը Երեւանի եւ այլ վայրերու մէջ, երիտասարդական շարժումները եւ կեդրոնները, Սեւանի Դպրեվանքը, առաջնորդական աշխատանքները եւ թեմական մակարդակի վրայ հոգեւոր եռուզեռը:

Վազգէն Վեհափառ իր բազմարդիւն գործունէութեան շնորհիւ ոչ միայն փրկեց Հայց. Եկեղեցին Հայաստանի մէջ, այլեւ լեցուն կեանքէ մը ետք՝ ազգին ժառանգ թողուց պատրաստուած կորովի սերունդ մը: Այդ սերունդի լաւագոյն ներկայացուցիչներէն մին ահա այսօր կը բազմէ Ս. Լուսաւորչի գահին: Վեհափառ Գարեգին Բ. արդէն անցնող գրեթէ երկու տասնամեակներու ընթացքին Արարատեան Հայրապետական թեմի մակարդակի վրայ փայլուն կերպով արդարացուցած է Վազգէն Ա. Կաթողիկոսի ակնկալութիւնները իրմէ եւ իր սերունդէն: Եւ մենք վստահ ենք որ յետ այսորիկ նորընտիր Վեհափառը իր կարողութիւնները եւ տաղանդը ի սպաս պիտի դնէ բովանդակ Հայց. Եկեղեցւոյ պայծառութեան ի նպաստ:

Սովորական մարդը կարելի է դատել իր նախընթացէն, իսկ առաքելական պաշտօնի կոչուած հոգեւորականի պարագային՝ մեր ակնկալութիւնները կը հիմնուին Ս. Հոգւոյ պարգեւած եւ պարգեւելիք շնորհներուն վրայ: Մենք կը հաւատանք որ այդ բազմապիսի աստուածատուր շնորհները պիտի փայլին նորընտիր Հայրապետին անձին վրայ՝ դարձնելով զայն իսկապէս արժանաւոր յաջորդը Ս. Գրիգոր Լուսաւորչին:

Նախ եւ առաջ կը մաղթենք արեւշատութիւն Նորին Սուրբ Օծութեան, որպէսզի ան երկար տարիներ վարէ իր դժուարին պաշտօնը եւ արժանաւոր կերպով առաջնորդէ Թորգոմի որդիները դէպի Քրիստոս, որ է ճանապարհ եւ

ճշմարտութիւն: Կ'աղօթենք որ Նորին Սրբութիւնը Ամենայն Հայոց Մայր Աթոռ իր երբեմնի բարգաւաճ եւ բարօր վիճակին վերադարձնէ՝ վերակենդանացնելով Արշակունեաց եւ Բագրատունեաց շրջաններու հայրապետանոցներու յիշատակները: Կը բաղձանք որ նորընտիր Հայրապետի ջանքերուն շնորհիւ Հայաստան աշխարհը ձերբազատուի օտարածին աղանդներու ազդեցութենէն եւ հայ ժողովուրդը Հայրենիքի եւ Սփիւռքի տարածքին դառնայ մէկ հօտ եւ մէկ հովիւ եւ վերջ դրուի եկեղեցական ներքին երկպառակութեանց:

Մեր մեծագոյն բարեմաղթութիւնն է որ մեր երիտասարդ Հայրապետը յառաջիկայ տարիներու ընթացքին ունենայ արդիւնաւոր գործունէութիւն ի փառս Հայց. Եկեղեցւոյ եւ բարեգարդէ մեր Սուրբ Եկեղեցին երիտասարդ, զարգացած եւ մանաւանդ հաւատացեալ հոգեւորականութեամբ: Մեր հաւատացեալ հօտը եւ մենք միշտ պատրաստ ենք եւ պատրաստ պիտի ըլլանք բերելու մեր աջակցութիւնը մեր սիրելի Հայրապետին եւ Մայր Աթոռին: Համոզուած ենք որ Եկեղեցւոյ ամբողջական զօրացումը մեր ալ զօրացումն է թէ՛ որպէս թեմ եւ թէ՛ որպէս քրիստոնեայ անհատ: Քրիստոսի մարմնի իսկական անդամներ կրնանք նկատել մենք զմեզ այն ատեն միայն երբ ի Քրիստոս հաղորդութեան մէջ ենք իրարու հետ: Քրիստոսի մարմինը հանդիսացող Սուրբ Եկեղեցւոյ միջոցաւ միայն կարելի է յուսալ որ մեր հոգիները պիտի փրկուին:

Թող Տէր Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր սրբազան գահակալով եւ իր հովանիին տակ առնէ մեր հայրենիքը, հայրենաբնակ ժողովուրդը եւ Սփիւռքի տարածքին ապրող մեր հայրենակիցները: Թող Տէրը տայ մեզի բոլորիս իմաստութիւն, հաւատք եւ յոյս, որպէսզի չշեղինք մեր հայրերու ճշմարիտ ուղիէն եւ հաւատարիմ մնանք մեր սրբազան աւանդութեան հանդէպ:

